

«Գրանցված է»  
ՀՀ արդարադատության  
նախարարության կողմից  
17 ապրիլի 2006 թ.  
Պետական գրանցման թիվ 10206111

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

12 ապրիլի 2006 թ.  
ք. Երևան

թիվ 65-Ն

## Հ Ր Ա Մ Ա Ն

### ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՈՒՅՑՆԵՐՈՎ ԿԻՐԱՌՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8, 9, 14, 15, 16, 16.1, 28, 29, 30, 31, 32, 34, 36, 37, 40, 41, 42, 43, 44, 44.1, 46, 47, 47.1, 48, 53.1, 64, 64.1, 65, 67, 69, 71, 72, 72.1 հոդվածները, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-33 հոդվածները, 34 հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերը, 35-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 8-րդ, 10-րդ մասերը, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 206.5 հոդվածի պահանջները և դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության աշխատանքները կանոնակարգելու նպատակով.

### ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

Հաստատել հարկադիր կատարողների կողմից կատարողական վարույթներով կիրառվող փաստաթղթերի ձևերը՝ համաձայն հավելվածի (կցվում է):

**Դ. Հարությունյան**

Հավելված  
ՀՀ արդարադատության նախարարի  
2006 թ. ապրիլի 12-ի  
թիվ 65-Ն հրամանի